

Կարելի է բանալ:


Կարելի է. բաց է անում այն աեզր, ուր նկարած էր կոյն ծնածի քժշկութիւնը:

—Ահա, ասում եմ, Քրիստոսը բացում է կոյրի աշքերը. բանում է դարձեալ և գտնում Վազարոսի յարութիւնը:

—Ահա այս էլ Քրիստոսը յարութիւն է տալիս մեռեալին:

Երկու պատրիարք էլ ջերմեռանգութեամբ համբուրեց:

Լսելով պատրիարքի օծման խորհրդի վեհութեան մատին՝ 6 կամ 12 եպիսկոպոսի ձեռքով, որոնք միասին օծեալի գլուխ վրայ գնելով իրանց բութ մատերը, շրջեցնում են զլխի վրայ (կաւծես մագնիսացնելով) և քում ո. միւս ոնք, որը առատ թափւում է 6 կամ 12 եպիսկոպոսներից աւագագոյնի ձեռքով.— Լսելով այս, ես զարմացայ, թէ էլ ի՞նչու նա յապաղեցնում է ընդունել այս օծումը, քանի որ նա պատրիարքական աթոռի համար ընտրուած է զեռ ես 1843 թ. և ես իմացայ, որ նա ցանկութիւն չունէր պատրիարք գառնալու և միշտ հրաժարում էր և թագաւորից հաստատութիւն ուտացաւ այն ժամանակ, երբ ու շաթափ պառկած էր մահուան անկողնի մէջ և իւր հաստատութեան մասին լսեց միայն մի ամսից յետոյց, երբ նոր էր ու շրի եկել:



Սահակ Բահ. Տէր Յօվհաննիսիանց

Սամրայոլ

Մըրագրութիւններ եւ Ենթադրութիւններ:

1. «Եւ հայոերական քաղաքէն թէ «քաղաքին»:

Գերապատիւ Մ. Օրմանեանն ասում է. «Թագուհու Զարմանդուխա անունը (Բուզանդ և, լէ-լը, էջ 251—255, Վենետիկ 1889) հայ կարծեցնել կուտայ զինքն, բայց Խորենացի «Ե կայոերական քաղաքէն» էր կըսէ (Խոր. Գ, ԽԲ, 232, Վենետիկ 1865), գուցէ տղայոց (Արշակի և Վազարշակի) յոյն մեծ մայրը [—տատը] իրենց մօրը հետ փոխանակելով»¹:

Մի կողմ թողնելով այն, որ ոչ մի հիմք չկայ մեր Պատթագաւորին յոյն Ոլիմպիադայի որդին համարելու և Զարմանդուխա ծագումը, որ Աէն-Մարտէնին էլ անյայտ է մնացել²,

^{1.} Գ. Գարու հայ եկեղեցին. Գ. Ներսէս Մեծի յաջորդները, էջ 45. (Արտատպած «Լումայ հանդիսից» Թիֆլիս 1905):

² Lebeau, Histoire du Bas-Empire. Tome iv, livre xix, § XVIII, էջ 27. Paris, M. Dccc. XXIV.

իսկ մաս կարծեքովնա Մամիկոնեան է և հաւանօքէն Մանուէլի քոյքը, որի մասին այլ ուշեց խօսելու ենք, դառնանք Խորենաց այս վկայութեան:

Նոյն Խորենացին մի գլուխ զերեւ առում է, թէ Թէոդոս Մեծը Հայոց թագաւորեցրեց Վարազգատի փոխարքէն Պապի սրգոց «զԱրշակ և զՎաղարշակ ... Եւ անդէն պահելով զմայք մանկանցն, արձակ է զնոսա հանդերձ վերակացուօք յի նքենէ ... որ եկին կալան զաշխարհս, և տիրեցին ոմա արիաբար մարտիւք ընդ Պարսոս: Խոկ մեծն Թէոդոս եւեալ ի պատերազմ՝, ի Միզու գանոն հիւանդացեալ մեռաւ»¹: Աւեմն Խորոգուը տնդէն՝ այնտեղ, այսինքն Կ. Պօլոսւմ պահելով Արշակի և Վաղարշակի մօրը, նրանց ու զարկեց Հայաստան: Խոկ ինքո գնաց պատերազմ և Միզու լանոն—Միւան քաղաքում մեռաւ:

Արդ Խորենացին յաջորդ գլխում պատմելով Հայոց թագաւորութեան երկուսի բաժանումը, ասում է. «Արշակը թողնելով իւր հայրերի ըսւն թագաւորութիւն Այրարատը, և Պարսից բաժնի ըսլոր մասը, գնաց տիրելու մեր աշխարհի արևմը տեան կողմերին, որ Յունաց բաժնի մասումն էր. ոչ միայն մօրն աղաքաւ, որ էր իկայսերական քաղաքէն»:

Տարակոյս լիսել չէ կարող, թէ կատկած յարուցանող բառը գրչագրի սխալ է, և պէտքէ լիսի «ի կայսերական քաղաքին»: որովհետեւ ըստ Խորենացու նախընթաց գլխի Թէոդոս Մեծն «անդէն», այսինքն «ի կայսերական քաղաքին», պահել էր «զմայք մանկանցն», այսինքն Արշակի և Վաղարշակի մօրը: Եւ ահա Խորենացին բացատրելով Արշակի Հայաստանի Պարսից բաժնից Յունաց մասը գնալու պատճառը, ասում է. «Ոչ միայն մօր պատճառով, որ կայսերական քաղաքումն էր, այլ լաւ համարելով նուազ կողմին տիրել և ծառայել քրիստոնեայ թագաւորի, և ոչ շատերին իշխել և հեթանոսների լծի առկ մանել»:

2. Առ խաց թէ Տոխայ: «Երբեն էր ընտակեալ ի գաւառակն Բառենց, և գիւղն՝ որ անուանեալ կոչի Ռոխայ»²:

Հրատարակիչը, որ, ինչպէս յառաջաբանից երկում է, վեց ձեռագիր և Ք. Պատկանեանի տպագիրը աչքի առաջ է ունեցել, զիտում է. «Օրինակ մի Տոխայ»: «Հասեալ մածեալ բանտկէին ի գաւառն Բառենց ի աեղիսն՝ որ անուանեալ կոչի

1. Խորեն. Գ. ԽԱ. էջ 254: Հենետիկ 1865:

2. Գ. Բուզանդ. Գ. ԽԱ. էջ 36: Վենեակ 1889:

Ասխա» 1: Հրատարակված գիտում է. «Յերկաւս օրինակս Ախսա»:

Բուզանդի այս երկու վկայութիւններից երեսում է, որ Գեն. գարում Բասեան գաւառում կար մի գիւղ կամ տեղեք, որ կոչւում էր Ասխայ-Ախսա և կամ Տոխայ:

Արդ ո՞րն է այդ ձեկիրեց ճշտագոյնը: Նախ այն գիտենք, որ այդ ձեւերը ոչ թէ ուռաւկան, այլ ուղղական են, ինչպէս այդ երկում է «անուանեալ կաչի» կրաւորուկան բայից ինչպէս որ այդ ունին և ուրիշները. «Առ եզերը գետոյն, ոք անուանեալ կոչի Հրազդան»² և այլն:

Ապա թէև այդ անունը, գմնեա այդ ձեւերով, մեր միւս մատենագիրները չեն յիշում, բայց և այնպէս կարելի է պընդել, որ Ախսա ձեւում տառեցի տեղափոխութիւն է տեղի ունեցել, ինչպէս լինում է գժրել—գթել, ոչխար-ոխչար, որևտոր—խստոր և այլն. ինչպէս այդ կորելի է եզրակացնել մեր այս երկու վկայութեանց բազմաթիւ օրինակների համաձայնութեամբ³, բայց մանաւանդ Տոխա ձեկից, որ ս տառն ամենին չունի:

Արդ կը մնայ որոշել, թէ ո՞ր ձեն է ուղիղ, Ո՞սխա թէ Տոխա:

Ինձ թուում է, որ վերջին Տոխա ձեն է ճշտագոյնը, չնայելով որ միայն մի օրինակումն է յիշուած, ինչպէս ասում է հրատարակիչը, զիտել է և Խնճիճեանը⁴: Եւ ահա թէ ինչո՞ւ:

3. Հայերի Հայաստան մանելուց էլ զեռ շատ տառջ Հայաստանի հիւսիսային արևելեան և արևմտեան կողմերում հառաւուել էին Թուրքանական ժողովուրգներ: Այսպէս Կառապերը ըստ Հեյնրիխ Աբակերտի համանուն ժողով մեր Փայտակարան նահանգը պիտի անցած լինին⁵: Դեռ Քսենոֆոնի ժամանակ մեր Բասեան գաւառներում ապրում էր Ֆա զա զիս ժողովուրդը, որից անշուշտ ծագել է Բասեան անունը, և ցարդ կայ մի թուրք մողոլական ժողովուրդ Բասեան (Basian) անունով⁶. այսպէս էլ Տայքում մնացել է Միջին Ասիայում ապրող Տոխա ժողովրդի անունը Թուրքարո⁷ ամրոցի վերայ: Խնճիճեանը

1. Բուզ նդ. Գ. ԽԲ, էջ 455:

2. Խորենացի, Ա. ԺԲ, 29:

3. Գ. Խնճիճեանը ընդունել է Ասխայ-Ախսա մեր Թէեւ պիտի եւ Ախսա (Խորազր. Հ. Հայաստանի, էջ 587, Վինետիկ 1822):

4. Ստորազր. Հ. Հայաստանի էջ 587:

5. Lehrbuch der Alten Geographie, § 86. էջ 85. Berlin, 1878:

6. Oscar Peschel, Völkerkunde II. էջ 406. Leipzig, 1897:

7. Ստորազր. Հ. Հայաստ. 8այք, էջ 575: Հմմտ. Խորեն. Աշխարհագր. էջ 614. Պատմ. Թաթարաց Ա. էջ 41. Երուսաղեմ 1870:

կարծեքով Գոհ ժազմիրդի անունով է կոչուել և մնը Տայքը^{1:} Օքուսուս (Ամուգարիա) և Խաքսարտէսի (Սիրկարիա) հովտում ապրող Գարեհի արձանագրութեանց Յակա ժողովուրդը, Աւետայի և Հերոգոստի Գահան^{2:} Գիմբըրի—Կիմմէրներն են, որոնք 680—670 ըստ ասսուրական արձանագրութեանց հաստատուել են Խփրատի այն կողմը Կիլիկիոյ և Թիքարացոց մէջ և կոչւում են Դուխոս կամ Տուխա, իոն գեռ Թ., և Է. գարեքում սարսափեցնում էին Փոքր Ասիմն մինչև Ափուղիս և Յոնիա^{3:} Կիմմէրները 679-ին յարձակուեցին Կապադովիկա, իսկ 624-ին Մարասատի, Փոքր Ասիմ, Ասորիք մինչև Եգիպտոսի սահմանները երկար ժամանակ^{4:} Ճիշտ նկատում է Կիպէրտը, որ հայերն Կապադովիկան կոչում ենք և Գոտմիքը, որոնք ժագել են Գիմիքը—Կիմմէրի և Դուխոս անուններից:

Արդ ինձ թուում է, որ անուանս միւս ձեզ Տուխան մնացել է Տոխա գիւղի վրայ: Բատենում հնումը յիշուում է Գուղ գիւղ, որ Տուղանգը չունի, բայց այս Դուշի հետ միասին յիշուում է և մի այլ գիւղ «Արգրու»^{5:} որ Փ. Բուզոնդի Արգորուն^{6:} է: Խնճիճեան ասում է «Այս երկուսը միմեանց մօտ են, որոնք կոչւում են Փոքր Տու և Մեծ Տու» այս պատճառամ էլ Ասողիլը միտուն է յիշում^{7:} Ասողիկն այդ տեղը քաղել է Սերէսոսից, որ Նոյնակն միասուն է յիշում, դուցէ և միմեանց մօտ լինելու համար բայց այսաեղից զեռ գժուար է հետեւցնել, որ Արգրուն էլ Դու է կոչուել. մնում է հաւանական միայն, որ հնումն էլ երկու Դու կամ Տոխան կար, Ենչպէս կարելի է Ենթագրել և Տուղանգի «ի տեղիսն» յոդնական ձևից: Սակայն այսաեղ էտականն այն է, որ, ինչպէս Խնճիճեանն ասում է, այժմ էլ կայ երկու Տու, որ կոչւում են և Գու. «Կոկ այլազգիք Թիւյ են անուանում . . . և լեռն էլ նոյն անունով կոչում»^{8:} այն է «Թիւյ ատազի», որ գտնուում է Հասանզալէից արեմուաք և Կարնոյ արեկելեան կողմը^{9:}

1. Ասորակը. Հ. Հայաստ. էջ 568.

2. Iran. Philol. II, էջ 401—445. Strassburg 1896—1904.

3. H. Kiepert, Lehrbuch, § 91, էջ 91:

4. Iran. Philol. II, էջ 408—412:

5. Ի. Փարուկիցի Գ. Հե. էջ 156—20. 146. Հրաբ. Ա. Խշմրածնի. Տփղիս 1904: Ա. Ասոտիկիրացի, ծ. 2. 67. Վահեմիկ 1844:

6. Սերէս Գ. ԻԳ. էջ 77. Ա.-Պետերը. 4869: Հմիտ. Ասողիկ Բ. Գ. 444. Ա. Պետերը. 1885:

7. Բուզանդ. Գ. Գ. 45 Վահեմիկ 1889:

8. Ասորակը. Հ. Հայաստ. էջ 585:

9. Խփրիկեան. Բնաշխարհիկ բանարան. ահս «Գու»: Վահեմիկ

Հաւանօրէն Դու կամ Տու-Թիւյ նոյն Տոխանէ, որի միւս
ձեզ Դուխտ մենք տեսունք հապագ ովկիա անուան մէջ, իրա-
հատ և վերջընթեր և տառն էլ փոխուած՝ Դովկի ձեւով, իսկ
Բաւենում մնացել է, որովհետեւ երկու համաստւն գիւղեր են,
յոդնական ձեռվ Տուհք ուստի և մեր Վարդեկսի հին ժողո-
վրդական երգում յիշուած Տուհաց գաւառը¹ Բասեան
դաւառների կամ մի մասի անունն է. մանաւանդ որ Խորե-
նացու յիշած ժողովրդական երգից առաջ նոյն դլառում Բա-
սենի մասին խօսք է լինում։ Արգեօք նոյնը չէ և ԺՊ. դա-
րում յիշուած Տուհաց գաւառը²:

4. Գահա-Սակերը տարածածուած են եղել ոչ միայն Փոքր
Ասիայում, այլ և Հայաստանի հետախային արևելեան կող-
մերը, այդ հետեւմ է արդէն վերեք Գիմիրը—Կիմմերացոց
մասին մէջ բերած վկայութիւնից։ Սակերից մնացել է Շակէն
կամ Սակաշէն (=Նաքի) անունը. Խսիդրոսը յիշում է Սակաս-
տանում Բարդա, որ, ինչպէս Խճիճեանը նկատել է, մոտ է
Պարտաւ անուան Յ, որ սակայն այժմ ևս կոչւում է Բարդա:
Խոկ Գիմիրը—Կիմմեր անունը մեզ յիշեցնումէ Ալեքսանդրապու-
քաղաքի հին անունը, Գիւմըի, որ այժմ Ալեքսանդրապուի
հնագոյն թաղն է, անշուշտ Ը. դարում յիշուած Նիրակ
գաւառի Կումայըի³ գիւղը։ Ինքն ըստ ինքեան հաս-
կանալի է, որ Սակերը տարածուած լինելով Կապադովկիայից
մինչև Նակաշէն-Նաքի՝ ապրած լինէին և Նիրակում կամ ոորա-
մօտերըը, ուստի և զարմանալի թող չթուի, որ Ալաչուուի
սեպագիր արձանագրութեան մէջ յիշուած անուններում,
որտեղ ուրիշները Հայաստանի բազմաթիւ վայրերի և ցե-
ղերի անուններն են նշմարում, և Կիմմերներն երեան։ Ահա
այդ արձանագրութեան մեզ կարեսը մասը. «Խուսա, Սարդու-
րիի որդի, ես այս Նահանգները, ամբութիւնները, որոնք են
վիճակ քաղաքին..., երկիրն Ագահունի (Ագահունի), երկիրն
Ուելիգա, երկիրն Կումերուհի, երկիրն Նիրուկոքինի (Նի-
րակ),..., երկիրն Նամտառունի (Նամտառունի)..., երկիրն Ռիշ-
ուտնի (Ռշտունի)..., երկիրն Ակուանի (Ակուանը), երկիրն Ալգի-
րունի (Ալգն)..., երկիրն Ատազանի (Ատազ), երկիրն (Երե-
ւան)..., տասնուինը թագաւորներու երկիրները..., հարկա-
տու ընդամենը 23 թագաւորներու արութիւններն ես նուա-

4. Խորին. Բ, ԿԵ, 144—145:

2. Գիրը Աղթոց, էջ 528. Թիֆլիս 1904:

3. Սարդար. Հ. Հայաստ, էջ 544:

4. Աեւսնդ, Պատմ. 1. Ֆ, էջ 158. Ս.-Պետերբ. 1887:

ճեցի, մարդկանց, կանանցն ի նիստնայ (Վան) ես տալայ այս տարի»¹: Արդ արձանագրութեան կումբուհի անունը համարեա թէ Գեմմիքը—Կիմմէցնէ: Աչքի է ընկնում և այն հանգամանքը, որ այդ երկերը յեշուում է մի ուրիշի հետ, որ նիւթակն է համարւում: Ժամանակաթառութիւն էլ յարմարւում է, ովովհետեւ արձանագրութեանս Ռուսան, Սարդուրի որդին, Ռուսա Ա. է, որ իշխում էր Է. գարու վերջին քառորդում (730—714)²:

Դիտելու է և այն, որ արձանագրութեան մէջ կումեւըունի երկրից անմիջապէս առաջ յիշւում է Ուելի գա, որ յիշեցնում է մեր Ռուսիք—Օլթին:

ՍՏԵՂԻԱՆ ԿԱԲՈՅՀԵԱՆՑ.

11 Մարտի 1910.

ՀԱՅԵՐՔՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

4. Մ Ա Ր Մ Ա Ր

Դարաբազի բարբառով կը նշանակէ «կրծել», կրծելով ուտել: Օք. Մաւկը օսկար է մարտում: Յեղակից է սանսկրիտ որդ «պատուել», լատ. mord-ere, ֆրանս. mord-re «կծել», խածնել» բառերուն: Խնչպէս MSL 15,245 ևս նկատած եմ կուլալ—սանս. gôla, մղմող—ռուս. моль, մօլ—սանս. տնլա «արմատ», կոլ—լատ. gula «կոկորդ» բառերուն առթիւ, այսպիսի ստուգաբանութիւնները կը ցուցնեն, թէ մեր գաւառական բարբառներն ալ ունին այնպիսի ընտիր հայերէն արմատական ձևեր, որոնք ուղղակի կը կապուին հնդերոպական նախութեզուին, և հետեւաբար պատահմամբ միայն գործածուած չեն հին հայ գրականութեան մէջ:

2. Տ Պ Ա Ր Կ Ա Ն.

Արեմտեան կոչուած բարբառներուն մէջ գործածական է

1. Էփրիկեան. Բնաշխարհիկ բառ տ. բառ «Ալաչալու»:

2. S. Weber, Die Kathol. Kirche in Armenien, §1, էջ 6, Freiburg im Breisgau 1903: